



ԲԱԶՄԱՎԷՊ

ՕՐԱԳԻՐ

ԺԵ ՏԱՐԻ, ԹԻԻ 17.

1857

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1.

քարոյական

Ճննաց խելացի առածներ : (Տես երես 229)

Հարուստը մեզկ անզգայութեամբ կ'անցրնէ իր օրերը . առանց ախորժակ ունենալու՝ մեծամեծ հարկինքներ պատրաստել կու տայ իրեն . ձմեռուրնէ խիստ շատ առաջ ընտիր մուշտակներ կը դիզէ . խուռն բազմութիւն ծառայից չորս կողմը առած է , որոնք իր ու իցէ ակնարկութեանը կը սպասեն՝ որ մէկէն կատարեն . սենեակները շքեղ են . երբոր ուզէ հասարակաց դիմաց երևնալ , հարուստ պատգարակի և կամ փառաւոր զարդարուն նաւակի մը մէջ կը նստի . որ և իցէ բանի փափաքելու կարօտութիւն չունի , որովհետեւ ինչ որ իր զգայութեանցը ախորժեղի կրնայ գալ՝ անոնք ամէնքը քովը կան : Ի՞նչ կը պակսի իրեն . — հասարակաց համարմունքը :

Ի՞նչքատը ընդհանրապէս ոչ շատ բարիք կրնայ ընել և ոչ ալ շատ չարիք :

Բայց թէ որ հարուստը ուզէ բարիք ընել , իրեն ունեցած երջանկութիւնը շատերուն կը տարածուի ու կը ծաւալի . թէ որ ինքզինքը ախտերու տայ , խումբ մը դժբաղդներու բոլորովին կը թշուառացրնէ : Եւ մեծամեծ բարիք և կամ մեծամեծ չարիք զուգրնթաց են միշտ հարստութեան հետ :

Հարմար ժամանակ ու վերջին կարօտութեան մէջ թեթեւ օգնութիւն մը ընելը աւելի յարգ ունի՝ քան թէ հարիւրաւոր անյարմար բարերարութիւններ ընելը :

Ի՞նչ մեծ մարդն որ իր դարուն թշուառութիւնները դարմանելու համար ծրնած է , սիրտ մը միայն ունի՝ ի գործ դնելու իր մտածութիւնը , բայց կարող է տասը հազարի չափ ուրիշ սրտեր ալ գտնել ու իրեն հետ միացրնել :

Մարդ չկայ որ երջանիկ ըլլալու ետե-

ւէ չըլլայ . բայց որ և իցէ ջանքով ալ կրնայ մէկը երջանկութեան հասնիլ : Այլ որ գոհ ըլլալ գիտէ , փափաքանացը հասած է :

Սա մարդն որ առաջին կարգի ատենակալաց մէկն է , կ'ըսուի թէ արդար մարդ մը ըլլայ : Բայց թէ որ մեծամեծ չարիքներ չէ արգիլած ու մեծամեծ բարիք չէ ձարած , իր պաշտօնը գէշ կերպով վարող ատենակալէ մը ինչ տարբերութիւն ունի :

Արսես դու . Սա բանին ետեւէ ըլլալու համար՝ կը սպասեմ որ բաւական ժամանակ ունենամ : Ա՛րբ պիտի գրտնաս աս ժամանակը : Ա՛մէն բանի համար ժամանակ ունիս , թէ որ գիտնաս ժամանակը լաւ կերպով գործածել :

Բանի որ տաք օգերը նոր սկսեր են , ձմեռուան զգեստներդ կղպանքի տակ մի դներ . բաղդին առաջին յաջողութիւններուն՝ հին բարեկամացդ կռնակ մի դարձրներ :

Կարօտութիւնն ու անծանօթ ապրիլը՝ արթնութիւն ու խնայողութիւն կը ծնանին . և աս առաքինութիւններէն առաջ կու գան հարստութիւն ու պատիւք . ասոնցմէ ալ շուայլութիւն ու գոռոզութիւն . գոռոզութեան ու շուայլութեան զուգընթաց են ախտն ու պարապօրգութիւնը , որ մէկէն աղքատութեան կը տանին :

Հարուստը ոչ երբէք յանցանք ունի : Հարկինքի հրաւիրուած օրը՝ թէ որ խիստ կանուխ երթայ , տանտէրը ամէն գործքը կը թողու , զուարթերես դէմք մը կը ցուցնէ իրեն , ու շնորհակալ կ'ըլլայ իրեն մեծ փութոյն . իսկ թէ որ սպասեցընել տայ , ժամանակ ալ չեն ձգեր որ ներումն առնէ , բարձրաձայն կ'ըսեն՝ թէ անշուշտ իր մեծամեծ զբաղմանցը համար ուշացեր է գալու : Բայց աղքատի մը նոյնպէս չեն ըներ . թէ որ շատ շուտ գայ , կը թողուն որ սպասէ , ոչ ոք կու դայ զինքը ընդունելու , նոյն իսկ ծառայքն ալ կ'ըսեն համարձակ երեսին՝ թէ ինչ անտանելի մարդ է . թէ որ ուշ գայ , լաւ մը կը յանդիմանեն զինքը , ու վայրկեան

մը ևս սեղանը ուշացընել տալուն համար չեն ներեր իրեն :

Արդ պակսութիւն մը չէ՞ս տեսնար . աւելի խստիւ քննէ ինքզինքդ , ու հաստատութեամբ միտքդ դիր որ ըզքեզ դիտելու ժամանակդ քանի մը ծածուկ ախտեր աչքէդ փախած են : Այլ կերպով կը զարգանայ մարդս առաքինութեան մէջ , ու շատ պակսութիւններէ ալ կրնայ խորշիլ :

Արիշի վրայ եղած պակսութիւնները աչքիդ կը զարնեն . նայէ որ աւելի անոնց ընտիր յատկութիւններուն ուշադրութիւն ընես : Այսպէսով կրնաս բարեկամներ ստանալ , ու այսպէսով ուրիշի ատելութենէն ազատ կ'ըլլաս :

Աղքատին օգնութիւն ըրէ , բայց իրեն կարօտութեան պատճառները մի հարցըներ . թերևս տեսնելով որ իրեն պակասութեանցը համար ան խեղճութեան մէջ ինկեր է , գթութիւնդ իր վրայէն կը պակսի :

Օարմացիր աղէկ գործքի մը վրայ , բայց ամենեւին անոր պատճառները մի պրպլտեր . թերևս այնպիսի կասկածներ մտքիդ մէջ կը ծնանին , որ անոր նմանելու եռանդդ պաղեցընեն :

Սա մարդուն իմ բարերարութիւններս առատաձեռներ եմ , և զինքը ապերախտ կը տեսնեմ : Վեղեցիկ առիթինձի առաքինութիւնս՝ ի գործ դնելու : Իրեն ապերախտութիւնը հարկաւ ինձի վիշտ կու տայ , բայց ես և ոչ իսկ մտքէս անցընեմ զինքը պատժելու :

Ամենեւին անյագ մի ըլլար քու փափաքներդ կատարելու մէջ . անանկով կրնաս նոր նոր զուարճութիւններ գրտնալ քեզի :

Կառայութիւն մը կ'ընես ուրիշին . կերպէդ գուշակել տուր դիմացինիդ՝ որ ուրիշ անգամներ ալ այնպիսի ծառայութիւններ ընելու պատրաստ պիտի ըլլաս քու կողմանէդ . աս կերպով ապահով եղիր երախտագէտ անձինք գտնալու :

Կտրամանկին հետ ուղղութեամբ վարուէ . կը տեսնես որ անոր նենգութիւնները իր գլուխը կը դառնան :

Ամօթխած եղիր, ու ան ատեն ու ըրիչները համարմունք կ'ունենան վրադ. բայց երբոր դուն քու խօսքերովդ կ'ուզես գովել զքեզ, բաւական պատճառ կու տաս ուրիշներուն որ չհաւատան խօսքերուդ:

Վրակիցդ տրտմութեան մէջ որ ինկած ըլլայ, ծածկէ իրմէ քու հաճոյքներդ. թէ որ տնէդ ուրախութեան արձագանքներ առնելու ըլլայ, կը կարծէ որ իրեն ցաւն անարգելու համար կ'ընես:

Մէկու մը հետ իր պակասութեանցը վրայ կը խօսիս. շատ խիստ մի ըլլար, չէ նէ՝ մտիկ չընէր խօսքիդ: Թէ որ յորդորել կ'ուզես զինքը առաքինութեան, առջի բերան շատ դժուարին բան մի առաջարկեր իրեն. ապա թէ ոչ կը խորշի դժուարութենէն, ու տրւած դասդ անօգուտ կ'ըլլայ:

Վործողութեան մը կը մտածես ձեռք զարնելու. թէ որ օգտակար է քեզի ան բանը առանց ուրիշին փնաս մը ընելու, 'ի գործ դիր զայն: Թէ որ ինը կողմանէ շահաւոր է քեզի, ու մէկ կողմանէ միայն ուրիշին փնասակար, ու շացուր զան ու աղէկ մտածէ վրան: Թէ որ ուրիշին եղած փնասը՝ հաւասար է քու անկէց քաղելու բարւոյդ, մէկդի կեցիր մտածածէդ: Թէ որ ուրիշներուն մեծ անիրաւութիւն մը ընելով միայն օգտակար կը տեսնաս քեզի անիկայ, սարսափէ քու խորհուրդէդ: Բայց թէ որ օգտակար կրնայ ըլլալ ուրիշներուն և միայն քեզի փնասակար, եթէ մեծանձն ես՝ 'ի գործ կը դնես զայն:

Ըն իմաստուններն որ իրենց գրուածքներովը մտքերնին կը դնեն զմարդիկ ուղղելու, քիչ անգամ իրենց յուսացած նպատակին կը հասնին: Բայց պէտք չէ որ աս բանիս համար յուսահատին. ժամանակը կը հասունցընէ ան պտուղները, զորոնք իրենց ըրած վարդապետութիւնները պիտի տան:

Չկայ ամենեւին աւելի յարմար բան մը որ զմեզ մեր թշուառութեանց մէջ մխիթարէ, բայց եթէ մտածելն այնչափ դժբաղդներու վիճակը, որ մեզմէ աւելի նեղութիւն կը կրեն:

Արնամ իմ վրայօքս եղած չարախօսութիւնները սուտ հանել. բայց աւելի խելացութիւն չէ համբերել չարախօսին: Արնամ զիս զրպարտողը խայտառակել ու խաղք ընել. բայց աւելի ընտրելի չէ արդեօք անոր սիրտը փոխել:

Շատ մտածել ու քիչ խօսիլը՝ գաղտնիք մըն է շատ բան սորվելու:

Սէն-Սան-Ղէու կայսրը լուսաւորեալ մարդկանց խորհուրդները սիրով կ'ընդունէր. նոյն խի գեղացիին բերնէն աղէկ մտածութիւն մը լսելու չէր քաշուեր. անոր համար փառօք պսակեցաւ: Բագաւանդ երկիր մը իրեն մէջի սերմերը կ'առատացընէ. աղէկ թագաւոր մը իմաստնոց թիւը կը բազմացընէ:

Վայժակը զարկածը կը փճացընէ. արտաքոյ կարգի ծանրութիւն մը ճընշած բանը կը ջախջախէ. բայց բռնաւորի մը ինքնահաճոյ իշխանութիւնը քան զկայծակն աւելի ահաւոր է, և քան զբիւրաւոր կենդինարս աւելի ծանր:

Հիմակուան ատենս աղախինները անանկ հարուստ զգեստներով վաճառանոցը կ'երթան, ինչպէս որ ատեն մը թագուհիք հանդիսի օրեր կը հագուէին: Հասարակ վաճառականներու խանութներուն պատերը նոյն կերպասներով զարդարուած են՝ ինչ որ ատենօք թագաւորներու հագուստի կը ծառայէին. և դերասան ու երգեցիկ կանայք կը տեսնաս, որ իշխանութեաց հաւասար սգուած կապուած են: Այս սակայն այսպիսի զեղխութեան սիրոյն համար՝ ցրտի ու անօթութեան կը համբերեն, յափշտակութիւնն ու զրկանքը օրինաւոր կը սեպեն ու կ'ընեն. և հասարակաց զեղխութիւնը տէրութեան կործանումը պիտի բերէ:

1 Այս յետին իմաստուն առածը կոյ մանտարինին առ Վան-գի կայսրը սուած իրատն է՝ Քրիստոսի թուականէն 170 տարի առաջ:

